ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՄԻ ՇԱՐՔ ԵՐԿՐՆԵՐԻ ԻՐԱՎԱՆՈՐՄԵՐՈՒՄ
(Համեմատական վերլուծություն)*

Գարիկ Քեռյան, Նվեր Կոստանյան

Բանալի բառեր՝ ընտրություններ, պոլիարխիա, համընդհանուր ընտրական իրավունք, ընտրական իրավունքի սահմանափակումներ, նվազագույն տարիքային շեմ, քաղաքացիություն, ընտրատարածք, մշտական բնակության ցենզ:

Ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների պարբերական անցկացումը ներկայացուցչական ժողովրդավարական կառավարման համակարգ ունեցող պետությունների գոյության և վերջիններիս կայուն զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկն է: Ընտրությունների անցկացման, դրանց ժողովրդավարական էությունն ապահովելու տեսանկյունից կարևորագույն դեր ունի ընտրությունների անցկացումը կարգավորող իրավական մեխանիզմների առկայությունը: Ուստի պատահական չէ, որ ներկայումս ժողովրդավարական կառավարման համակարգ ունեցող պետությունները իրենց սահմանադրահիրավական և մի շարք այլ ենթաօրենսդրական կարգավորումներում առանձնահատուկ տեղ են տալիս ընտրություններին, դրանց անցկացման չափանիշներին, մասնակցության սկզբունքներին և այլ հարցերի: Այս տեսանկյունից հարկ է ընդգծել, որ համընդհանուր ընտրական իրավունքը ընդունված է համարել ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար անհրաժեշտ կարևորագույն սկզբունքներից և չափանիշներից մեկը. վերջինս միտված է պետության քաղաքական կյանքին և որոշումների ընդունման գործընթացին հանրության՝ հնարավորին չափ լայն շերտերի մասնակցության ապահովմանը: Ըստ Ռ. Դալի հայեցակարգի՝ իրական պոլիարխիայի[1] գոյության յոթ հիմնական երաշխիքներից մեկը գործնականում բոլոր չափահաս քաղաքացիների ընտրական իրավունքի առկայությունն է[2]: Եւ չնայած վերջին 200 տարիներին ընտրական գործընթացների հիմնական տրամաբանությունը եղել է ընտրական իրավունքի բոլոր սահմանափակումների՝ մեկը մյուսի հետևից փուլ առ փուլ վերացումը, այնուամենայնիվ այսօր էլ մի շարք երկրներում առկա են ընտրական իրավունքի որոշ սահմանափակումներ[3]:

Համընդհանուր ընտրական իրավունքի և՛ դե յուրե, և՛ դե ֆակտո սահմանափակումների հարցը արդիական էր հատկապես 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին: Այս շրջանում հատկանշական էր կանանց, ինչպես նաև այլ խոցելի սոցիալական խմբերին (օր.՝ համեմատաբար սակավ նյութական կարողություններ տնօրինող անձինք, սևամորթներ, կրոնական, ազգային փոքրամասնություններ և այլն) ընտրական իրավունքով օժտել-չօժտելու հարցը, ինչը բուռն քննարկումների տեղիք էր տալիս ոչ միայն գիտական հանրույթում, այլև պետությունների քաղաքական կյանքում: Ի տարբերություն վերոհիշյալ ժամանակահատվածի՝ ընտրական իրավունքի՝ ներկայումս գոյություն ունեցող իրավական սահմանափակումները վերաբերում են քանակապես ավելի փոքր թվով անձանց ընտրական իրավունքի իրացմանը: Դրանք հիմնականում անազատության մեջ գտնվող, տվյալ պետության քաղաքացիություն, կամ մշտական բնակություն չունեցող և հոգեկան տարբեր հիվանդություններ ունեցող անձինք են: Թեև այն պնդումը, որ վերջիններիս ներառումը ընտրական գործընթացներին կարող է էապես ազդել ընտրական գործընթացների վրա, չունի բավարար հիմքեր, այնուամե-

---

* Հոդվածն ընդունվել է 19.03.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ք.գ.թ. Ֆ. Ակոպյանը: 26.03.21:

նայնիվ այս հարցը քաղաքագիտության, իրավագիտության և հասարակական այլ գիտությունների համար շարունակում է մնալ ոչ միայն գիտական հետաքրքրության առարկա, այլև այն ընտրական գործընթացների ժամանակահատվածում արժանանում է քաղաքական գործընթացների մասնակիցների հետաքրքրությանը: Հոդվածում փորձել ենք անդրադառնալ ընտրական իրավունքի՝ ներկայումս մի շարք երկրներում գոյություն ունեցող հինգ հիմնական սահմանափակումներին և փորձել զուգահեռներ անցկացնել ՀՀ-ում առկա իրողությունների հետ:

Տարիքային սահմանափակում: *Ընտրական իրավունքի՝ ներկայումս հայտնի ամենատարածված սահմանափակումը, թերևս, տարիքային սահմանափակումն է: Այսօր աշխարհի բոլոր երկրները իրենց սահմանադրահիրավական փաստաթղթերում ամրագրում են ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող անձանց համար նվազագույն տարիքային շեմ, որը չգերազանցող անձինք չեն կարող մասնակցել ընտրություններին: Հանրության ոչ չափահաս հատվածին ընտրական գործընթացներում չներառելու ամենատարածված հիմնավորումն այն է, որ հասարակության միայն չափահաս հատվածն է ունակ կայացնել կշռադատված քաղաքական որոշումներ և պատասխանատու լինել դրանց համար: Հասարակության անչափահաս մասը կազմող երեխաները և պատանիները հիմնականում չեն կարող ունենալ բավարար գիտելիքներ և քաղաքական տեղեկացվածություն սեփական որոշումները կայացնելու համար, ուստի հեշտությամբ կարող են կրել ծնողների, այլ հասակակիցների կամ տարբեր գործոնների ազդեցությունը: Նվազագույն տարիքային շեմի հարցում իրավագիտական և քաղաքագիտական հանրույթում միասնական տեսակետ չկա: Ընտրական իրավունքի շնորհման բարձր տարիքային շեմ սահմանելու կողմնակիցները պնդում են, որ մարդը հասունանալով ավելի շատ գիտելիքներ և փորձառություն է ձեռք բերում, ուստի ավելի հուսալի է պետության հետագա զարգացման համար որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու տեսանկյունից, քան անչափահասները, որոնք, ինչպես նշեցինք, չունեն ո'չ բավարար գիտելիք, ո'չ բավարար փորձառություն և հեշտությամբ կարող են մանիպուլացվել: Տարիքային ավելի ցածր շեմ սահմանելու կողմնակիցները, մյուս կողմից, պնդում են, որ պետության քաղաքացիների անչափահաս հատվածը շատ հարցերում ունի այնպիսի իրավունքներ և պարտականություններ, ինչպիսիք չափահասները (աշխատանքի անցնելու իրավունք, հարկային պարտավորություններ, հանցանք կատարելու դեպքում օրենքով նախատեսված պատժի կրում և այլն), ուստի ընտրական գործընթացներում ևս նրանց պետք է տրվեն այնպիսի իրավունքներ, ինչպիսիք՝ չափահասներին: Թեև գիտական հանրությունում այս քննարկումները շարունակվում են, իրականության մեջ պետությունների մեծ մասում նվազագույն տարիքային շեմի վերաբերյալ կա գրեթե նույնական մոտեցում: Սուվերեն պետությունների գրեթե 94 տոկոսում, ինչպես և Հայաստանի Հանրապետությունում նվազագույն տարիքային շեմ է սահմանված 18 տարին [4]: Միայն Բրազիլիան է, որ ունի տարիքային ավելի ցածր շեմ՝ 16 [5]: Երկու երկրներ՝ Ճապոնիան [6], և Թայվանը, տարիքային նվազագույն շեմ են սահմանել 20 տարեկանը: Մեզ հայտնի ամենաբարձր տարիքային շեմը այժմ առկա է Սամոայում՝ 21 տարեկան:*

Մտավոր խնդիրներ ունեցող անձանց ընտրական իրավունքի սահմանափակում: *Համընդհանուր ընտրական իրավունքի՝ այսօր հայտնի հաջորդ ամենատարածված սահմանափակումը վերաբերում է հոգեկան առողջության հետ որոշակի խնդիրներ ունեցող անձանց: Մտավոր խնդիրներ ունեցող անձանց ընտրական իրավունքի ամբողջական սահմանափակումը առաջին հայացքից թվում է բնական և անհրաժեշտ երևույթ, սակայն վերջինիս սահմանադրահիրավական ամրագրման փուլում ի հայտ են գալիս որոշակի տարակարծություններ [7]: Բանն այն է, որ հոգեկան առողջության հետ կապված խնդիրները միատեսակ չեն, և դրանց՝ մարդու գիտակցության վրա ազդելու լրջության վերաբերյալ մասնագիտական հանրույթում չկա միատեսակ կարծիք, ուստի*

չկա գիտականորեն ապացուցված և հստակ սահմանված այն կարմիր գիծը, որից այն կողմ գտնվողները պետք է զրկվեն ընտելու իրավունքից [8]: Այսպիսով՝ դիտարկված երկրներից միայն չորսը՝ Կանադան, Իտալիան, Իռլանդիան և Շվեդիան, մտավոր խնդիրներ ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման հարցում չունեն որևէ սահմանափակում: Դիտարկված մյուս պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար ընտրական իրավունքի որոշակի սահմանափակում այնուամենայնիվ նախատեսված է: Սահմանափակման համար ամենատարածված հիմքը թերևս այն է, որ անձը պետք է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումով ճանաչվի անգործունակ, այս իրավակարգավորումը գործում է մի շարք երկներում՝ Բուլղարիա, Չիլի, Նիդեռլանդներ, Ֆրանսիա, Էստոնիա և այլն, ինչպես նաև Հայաստանում[9]:

Քաղաքացիության պահանջ: *Ընտրություններին մասնակցելու իրավունք ստանալու համար տվյալ պետության քաղաքացի լինելու պահանջը, անկասկած, նպաստում է ամրապնդելու տվյալ պետության հանրային-քաղաքական միասնությունը, պետության ճակատագրի կանխատեսելիությունը և քաղաքական որոշումներ կայացնելու ունակ հանրույթի սահմանների որոշակիությունը: Հատկապես վերջին շրջանում միգրացիոն հոսքերի կրուկ աճով պայմանավորված՝ քաղաքացիության պահանջի դերը սկսվել է էլ ավելի կարևորվել: Ի վերջո պետք չէ մոռանալ, որ ընտրությունների արդյունքները հիմնված են քանակական և ոչ որակական սկզբունքի վրա, և քաղաքացիության պարտադիր պահանջի բացակայության պարագայում կարող է լինել այնպիսի իրավիճակ, երբ ներգաղթյալների քիչ թե շատ մեծաքանակ խմբի ձայնը կարող է ավելի որոշիչ լինել տվյալ պետության քաղաքական կյանքում, քան պետության երկարամյա քաղաքացիների կամարտահայտությունը: Պետական իշխանության ընտրությունը յուրաքանչյուր ժողովրդավարական պետության քաղաքական կյանքի կարևորագույն իրադարձություններից մեկն է, երբ հասարակությունը իրացնում է քաղաքական որոշում կայացնելու իր իրավունքը, ուստի նախքան մասնակցությունը ընտրություններին անձը պետք է ամբողջովին կամ գոնե մեծ մասամբ ինտեգրվի այն հասարակությանը, որտեղ նա ապրում է: Ընդ որում՝ իտեգրացիան այստեղ ոչ այնքան վերաբերում է միայն անձի ինտեգրացիայի հոգեբանական շերտին, որքան պետության կյանքում պարտականություններ ստանձնելուն և դրանք իրականացնելուն: Ներգաղթյալներին ընտրական իրավունքի շնորհումը առանց քաղաքացիության պահանջի վտանգավոր է նաև նրանով, որ վերջիններս, անծանոթ լինելով տվյալ պետության քաղաքական կյանքի նրբություններին և չկրելով մշակութային առանձնահատկությունները, կարող են հեշտությամբ ենթարկվել տարատեսակ մանիպուլյացիաների: Սակայն այս հարցում ևս տեսակետները միանշանակ չեն: Կան տեսաբաններ, որոնք պնդում են ընտրական իրավունքի համար քաղաքացիության պարտադիր պահանջի մեղմացման անհրաժեշտությունը: Այս պահանջը, ըստ վերջիններիս, լայն դաշտ է բացում քաղաքական խտրականության համար: Ներգաղթյալները, որոնք վճարում են հարկեր և ենթարկվում օրենքներին, չպետք է զրկված լինեն այդ հարկերի և օրենքների վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտելու իրավունքից [10]: Բրիտանացի փիլիսոփա, քաղաքական տնտեսագետ Ջոն Ստյուարտ Միլի կարծիքով՝ իրական անարդարություն է այն, երբ անձը զրկվում է այնպիսի հարցերում որոշումներ կայացնելու իրավունքից, ինչպիսի հարցերում ինքը ունի նույնքան հետաքրքրություն և շահ, որքան մնացյալը, եթե, իհարկե, դա տեղի չի ունենում ավելի մեծ չարիք կանխելու համար [11]: Գիտական հանրույթում, այս հարցերի հետ կապված, ևս չկա միասնական մոտեցում: Իրականության մեջ, սակայն, անկախ պետությունների մեծ մասը ընտրելու իրավունք տալիս է միայն քաղաքացիություն ունեցող անձանց: Սակայն կան նաև պետություններ, որտեղ քաղաքացիության պահանջը պարտադիր չէ ընտրություններին մասնակցելու համար: Այդ պետություններն են Չիլին, Ուրուգվայը, Նոր Զելանդիան և այլն: Թեև քա-*

ղաքացիության պահանջը պարտադիր չէ, սակայն այս երկրներում քվեարկությանը մասնակցելու համար պարտադիր պայման է համապատասխանաբար 5, 15 և 7 տարվա մշտական բնակության պահանջին համապատասխանելիությունը: Ըստ Մաաստրիխտի պայմանագրում տեղ գտած Եվրոպական Խորհրդարանի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցության կանոնների՝ ԵՄ այն քաղաքացիները, որոնք բնակվում են ԵՄ անդամ մեկ այլ երկրում, կարող են իրենց բնակության երկրում մասնակցել տեղական և համաեվրոպական ընտրություններին: ՀՀ-ում համապետական ընտրություններին մանակցության համար ՀՀ քաղաքացիություն ունենալը պարտադիր պայման է, սակայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը կարող են մանակցել ոչ միայն ՀՀ քաղաքացիները, այլև տվյալ համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և քաղաքացիություն չունեցող անձինք[12]:

Մշտական բնակության պահանջ: *Ընտրական իրավունքի շնորհման համար մշտական բնակության պահանջը լինում է երկու տեսակի՝ տվյալ ընտրական տարածքն ընդգրկող բնակավայրերում մշտական բնակության պահանջ և տվյալ երկրում մշտական բնակության պահանջ: Մշտական բնակության պահանջը ընդհանուր առմամբ չի ենթադրում, որ անձը քվեարկությանը նախընթաց ամբողջ ժամանակահատվածում պետք է գտնվելիս եղած լինի տվյալ ընտրական տարածքն ընդգրկող համայնքում կամ երկրում: Մշտական բնակության ցենզին կարող են բավարարել կոնկրետ ժամանակահատվածի առնվազն կեսը տվյալ տարածքներում գրանցված անձինք: Նախքան ընտրական իրավունք շնորհելը որոշակի ընտրատարածք ընդգրկող համայնքում կոնկրետ ժամանակահատված մշտական բնակության պահանջը հիմնավորվում է նրանով, որ անձը նախքան տվյալ համայնքի ապագային վերաբերող քաղաքական որոշումներ կայացնելը պետք է ամբողջովին ինտեգրվի տվյալ համայնքի կյանքին և խորապես ծանոթ լինի խնդիրներին: Այս տեսակետի հակառակորդները, պնդում են, որ այս պահանջը կհանգեցնի նրան, որ բնակության վայրը հաճախ փոխող անձինք ի վիճակի չեն լինի մասնակցել ընտրական գործընթացներին: Մի շարք երկրներ օրենսդրական կարգավորումներում ամրագրում են ընտրական տարածքում մշտական բնակության կոնկրետ ժամանակահատվածի պահանջ, որի տևողությունը, սակայն, տարբեր երկներում տարբեր է: Ավստրիայում և Նոր Զելանդիայում, օրինակ, այն մեկ ամիս է, մինչդեռ Ֆրանսիայում, Մալիում, Գերմանիայում, Հայաստանում մշտական բնակության պահանջված ժամանակահատվածը վեց ամիս է: Հայաստանի Հանրապետության ընտրողների վրա մշտական բնակության պահանջը տարածվում է միայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում, իսկ համապետական ընտրություններին և հանրաքվեներին մասնակցության համար բավարար պայման է քաղաքացիության առկայությունը: ՀՀ Ընտրական օրենսգրքի երկրորդ հոդվածը մասնավորապես սահմանում է, որ «ՏԻՄ ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած և ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում առնվազն վեց ամսվա հաշվառում ունեցող ՀՀ քաղաքացիները» [13]: Փորձը ցույց է տալիս, որ համամասնական ընտրական համակարգ ունեցող երկների դեպքում մշտական բնակության պահանջի առկայությունը ավելի հազվադեպ է, քան մեծամասնականի դեպքում: Ինչ վերաբերում է ընտրական իրավունքի շնորհման համար տվյալ պետությունում մշտական բնակության պահանջին, ապա այս դեպքում ժամանակակից ժողովրդավարությունները ձգտում են նվազագույնի հասցնել պետությունում մշտական բնակության պահանջի առկայությունը՝ ընտրությունները ավելի ներկայացուցչական դարձնելու տեսանկյունից: Այնուամենայնիվ այս հիմնախնդրի վերաբերյալ ևս տեսակետները տարբեր են: Նրանք ովքեր պնդում են այս սահմանափակման անհրաժեշտությունը, բերում են այն նույն հիմնավորումները, ինչ քաղաքացիության պահանջի դեպքում (ինտեգրվածութ-*

յան բավարար մակարդակ, խնդիրներին քաջատեղյակություն և այլն), մինչդեռ այն տեսաբանները, որոնք խոսում են սույն սահմանափակման ոչ օրինաչափ լինելու մասին, պնդում են, որ որևէ մեկը չպետք է զրկվի քվեարկելու իրավունքից, միայն նրա համար որ վերջին շրջանում բացակայել է պետությունից: Նրանք ունեն նույն պարտականությունները, հետևաբար պետք է ունենան նաև նույն իրավունքները:

Անազատության մեջ գտնվող անձանց ընտրական իրավունքներ: *Ինչպես քննարկված նախորդ հիմնախնդիրների դեպքում, այս դեպքում ևս տեսակետները տարբեր են: Անազատության մեջ գտնվող անձանց ընտրական իրավունքի սահմանափակումների հիմնավորման համար առանցքային հիմք է ծառայում այն համոզմունքը, որ քաղաքացիական հասարակությունը հիմնված է ամուր և գիտակցված հասարակական դաշինքի կամ պայմանագրի վրա, ինչը հասարակության բոլոր անդամներին պարտավորեցնում է պահպանել հասարակական համակեցության կանոնները (հիմա՝ օրենքը), և բոլոր նրանք, ովքեր այս կամ այն կերպ ոտնձգել են այդ օրենքի նկատմամբ՝ խախտելով իրենց խոստումը, դիտարկվում են որպես ժողովրդավարական գործընթացներին մասնակցության համար ոչ պիտանի անձինք: Ըստ այս տեսակետի՝ միայն քաղաքացիները ունեն ընտրելու իրավունք, իսկ հանցանք, գործած անձանց անվանել քաղաքացի մեծ սխալ է [14]: Իրականության մեջ, սակայն, առանց բացառության բոլոր ազատազրկված անձանց ընտրական իրավունքից զրկելը խստորեն հակասում է մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին: Ազատազրկված անձանց ընտրական իրավունքով օժտելու տեսակետը հիմնավորվում է տարբեր փաստարկներով: Նախ՝ ներկայումս ազատազրկման միջոցով քրեակատարման առաջնային նպատակը իր բնույթով ավելի շատ ուղղված է անձի սոցիալ-հոգեբանական վերականգնմանը՝ ռեաբիլիտացիային, քան պատժին և հասարակությունից մեկուսացմանը: Այս առումով կարևորվում է կալանավորների՝ ընտրական իրավունքի պահպանման հանգամանքը՝ որպես կարևոր գործիք վերջիններիս հետագա հասարակական ռեինտեգրացիայի տեսանկյունից: Այս երկու ծայրահեղ տարբեր տեսակետների համեմատաբար փոխզիջումային տարբերակը, թերևս այն է, որ անազատության մեջ գտնվող անձանց ընտրական իրավունքով օժտել-չօժտելու հարցը պետք է քննարկվի վերջիններիս կատարած հանցանքի հասարակայնորեն վտանգավորության և ծանրության աստիճանի տեսանկյունից: Փորձը ցույց է տալիս, որ երկների մեծ մասը հենց այս սկզբունքով են առաջնորդվել այս հարցի վեաբերյալ իրենց իրավակարգավորումներում: Այսպես՝ մի շարք երկրներում՝ ինչպիսիք են Բրազիլիան, Մեծ Բրիտանիան, Հնդկաստանը, Պորտուգալիան, բոլոր ազատազրկված անձինք, անկախ հանցանքի ծանրությունից, պատժի կրման ընթացքում զրկվում են ընտրական իրավունքից: Մյուս կողմից կան երկրներ, օրինակ՝ Կանադան, Գերմանիան, Շվեդիան և այլն, որտեղ ազատազրկված լինելու հանգամանքը ոչ մի դեպքում հիմք չէ անձին ընտրելու իրավունքից զրկելու համար: Կան նաև երկրներ, որտեղ ազատազրկված անձանց ընտրական իրավունքը սահմանափակվում է ոչ միայն պատժի կրման, այլև դրան հաջորդած որոշ ժամանակահատվածի համար: Օրինակ՝ Բելգիայում ազատազրկված անձինք զրկվում են ընտրական իրավունքից նաև պատիժը կրելուց հետո և բուն պատժաչափից առավել ժամկետով, ընդհուպ՝ ցմահ [15]: Ինչպես նշվեց՝ երկրների մեծ մասում, ինչպիսիք են Ֆրանսիան, Իսպանիան, Ճապոնիան, Հայաստանում, օրինակ, ազատազրկված անձանց ընտրական իրավունքի հարցը կախված է կատարված հանցանքի լրջության աստիճանից: Այս առումով ՀՀ Ընտրական օրենսգիրքը տալիս է ազատազրկված անձանց ընտրական իրավունքից զրկելու կոնկրետ հիմքեր: Ի մասնավորի՝ «ընտրելու իրավունք չունեն դիտավորությամբ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք» [16]: Ժամանակակից դինամիկան ցույց է տալիս, որ արդի ժողովրդավարությունները հակված են վերացնելու նաև ազատազրկված անձանց ընտ-*

րելու իրավունքի սահմանափակումը: Այսպիսով՝ որպես ամփոփում կարելի է փաստել, որ չնայած ժամանակակից աշխարհում ժողովրդավարական երկրների թվական աճին՝ հենց այդ երկրների սահմանադրահիրավական փաստաթղթերում կան համընդհանուր ընտրական իրավունքի մի շարք սահմանափակումներ, ու թեև գիտական հանրույթում դրանց վերաբերյալ չկա միատեսակ մոտեցում, այնուամենայնիվ մի շարք երկրներում դրանց վերաբերյալ մոտեցումները, կարելի է ասել, քիչ թե շատ նույնական են:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արևմտաեվրոպական քաղաքագիտական գրականության մեջ «պոլիարխիա» եզրույթը (հուն. poly- շատ arkhe- կառավարում) օգտագործվել է Ռոբերտ Դալի կողմից՝ նկարագրելու այն կառավարման համակարգը, որտեղ գործադիր իշխանությունը կենտրոնացված չէ մեկ անձի կամ խմբի ձեռքում և բաշխված է մի քանի անձանց կամ ուժերի միջև:
2. Տե՛ս **Robert A. Dahl,** Democracy and its Critics. New Haven: Yale University Press., 1989, էջ 233-234.
3. Տե՛ս **Katz Richard S.**, Democracy and Elections. Oxford University Press, 1997, էջ 216-232.
4. Տե՛ս ՀՀ Ընտրական օրենսգիրք (ընդունված՝ 25.05.2016), Գլուխ 1, հոդված 2:
5. Տե՛ս Voting is compulsory for Brazilians, http://english.tse.jus.br/noticias-tse-en/2014/Outubro/voting-is-compulsory-for-brazilians-aged-18-to-70/, /05.03.2021/
6. Տե՛ս Art. 15 of the **Constitution of Japan**. cf. Art. 9 of the Election Law
7. Տե՛ս **Gerald B. Robertson,** Mental disability and the law in Canada, 2nd ed., Scarborough: Carswell. 1994, էջ 289-292.
8. Տե՛ս **Denoncourt Yves**, Reflections on Criteria for Excluding Persons with Mental Disorders from the Right to Vote. Toronto, 1991, էջ 120-122.
9. Տե՛ս ՀՀ Ընտրական օրենսգիրք(ընդունված25.05.2016), Գլուխ 1, հոդված 2, կետ 4:
10. Տե՛ս **Beaud Olivier**, "Le droit de vote des etrangers: I'apport de la jurisprudence constitutionnelle allemande Ii une thoorie du droit de suffrage.", Paris 1992, էջ 413.
11. Տե՛ս **Mill John Stuart**, Considerations on Representative Govemment, London 1972, էջ 279.
12. Տե՛ս ՀՀ Ընտրական օրենսգիրք (ընդունված25.05.2016), Գլուխ 1, հոդված 2, կետ 2/3:
13. Տե՛ս ՀՀ Ընտրական օրենսգիրք (ընդունված25.05.2016), Գլուխ 1, հոդված 2, կետ 2/1:
14. Տե՛ս **Planinc Zdravko**, Should Imprisoned Criminals have a Constitutional Right to Vote?, Canadian Journal of Law and Society 2, 1987, էջ 153-164.
15. Տե՛ս **On the issue oflifetime disfranchisement, https://www.economist.com/weeklyedition/1998-10-24 .**
16. Տե՛ս ՀՀ Ընտրական օրենսգիրք (ընդունված25.05.2016), Գլուխ 1, հոդված 2, կետ 4:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ընտրական իրավունքի հիմնական սահմանափակումները մի շարք երկրների իրավանորմերում (համեմատական վերլուծություն)

Գարիկ Քեռյան, Նվեր Կոստանյան

Ժողովրդավարական կառավարման համակարգ ունեցող պետությունների քաղաքական համակարգում կարևորագույն նշանակություն ունեն ընտրությունները: Ներկայացուցչական ընտրությունների կազմակերպման տեսանկյունից առանցքային է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկի՝ համընդհանրության սկզբունքը: Ժամանակակից աշխարհում, սակայն, մի շարք երկրների իրավանորմերում առկա են ընտրական իրավունքի սահմանափակման մի շարք օրինակներ: Հոդվածում փորձել ենք անդրադարձ կատարել մի շարք երկրների իրավանորմերում ընտրական իրավունքի սահմափակումների հիմնական տեսակներին և համեմատություն ենք անցկացրել ՀՀ ընտրական օրենսդրության հետ:

РЕЗЮМЕ

Основные ограничения избирательного права в правовых нормах ряда стран (сравнительный анализ)

Гарик Керян, Нвер Костанян

Ключевые слова: выборы, полиархия, всеобщее избирательное право, ограничения избирательного права, минимальный возраст для голосования, гражданство, избирательный округ, требование о постоянном проживании.

Выборы имеют решающее значение в политической системе государств с демократическим управлением. Принцип всеобщего избирательного права - один из основных принципов избирательного права - имеет решающее значение для организации представительных выборов. Однако в современном мире есть ряд примеров ограничения права голоса в правовых нормах ряда стран. В данной статье мы попытались обозначить основные виды ограничений избирательного права в правовых нормах ряда стран и провести сравнение с избирательным законодательством Республики Армения.

SUMMARY

The Main Restrictions on the Right to Vote in the Legal Norms of a Number of Countries (Comparative Analysis)

Garik Keryan, Nver Kostanyan

Key words: elections, polyarchy, universal suffrage, restrictions on the right to vote, minimum voting age, citizenship, constituency, permanent residence requirement.

Elections are crucial in the political system of states with democratic governance. The principle of universal suffrage, one of the basic principles of the right to vote, is crucial for the organization of representative elections. In the modern world, however, there are a number of examples of restrictions on the right to vote in a number of countries' legal norms. In this article, we have tried to refer to the main types of suffrage restrictions in the legal norms of a number of countries and to make a comparison with the electoral legislation of the Republic of Armenia.